

Ա Ռ Ա Վ Ն Ե Ր .

Գ ա յ լ Ո Ն Ե Լ ա ռ Ի Ը Թ .

Գէլն անթցաւ, գնաց գտաւ զառուծ, որ եղնէն աղբէր մէկ տեղ նէնիրուածութեն (որսորդութիւն) էնէն, ապրէն:

Գացին մըտ ձիու նախիր. առուծն ըսեց Գէլ աղբէր, դու կանխ անկանջ էրէ, տես ես ինչ կէնիմ, ու ինչ որ կը հարցուս քրզնէ՝ դու զպատասխանէն տուր.— Զատ աղէկ, ըսեց Գէլ:

Առուծ գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու կանաւ հարցուց զիւրց.

«Գէլ աղբէր, իմ մազեր գժկցեր է» (ցցուիլ):

— Գժկցեր է, ըսեց Գէլ:

«Իմ աչքեր արնխոսներ է»:

— Որնխոսներ է:

«Իմ պոչ կեռեր է, եկի վըր իմ ճակտին:

— Հա, կեռեր է, ուղճակատ լէ ջընցեր է:

«Իմ պոչ տակ լէ կը թալէ»:

— Հա, Գ—Գ— (շատ) կը թալէ:

Իշման գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու զմրկ ի ձիու մը փոր. հրտ զարկելուն՝ զձին էրեց երկու տապակ, թափան վրէն կուշտ մը կերան ու ելան զացին:

Ուր օր Գէլն ըսեց. Առուծ աղբէր, է՛ր Գ—Գ իմ գօրն է (հերթ). պէտք է ես ձի մը սպանիմ.— Զատ աղէկ, ըսեց առուծ:

Գէլ գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու հարցուց առուծից.

«Առուծ աղբէր, իմ մազեր գժկցեր է»:

— Զէ, ըսեց առուծ:

«Ես, ըսէ գժկցեր է»:

— Հաչդէ, քու խաթրի համար կըսիմ գժկցեր է:

«Իմ աչքեր արնխոսներ է»:

— Զէ:

«Ուսհ, ըսէ արնխոսներ է»:

— Թըղ հըմալ եղնի, արնխոսներ է:

«Իմ պոչ կեռեր է, եկի վըր իմ ճակտին»:

— Զէ:

«Տօ՛ հըմալ մըսի չէհ, ըսէ կեռեր է»:

— Կեռեր է:

«Իմ պոչ տակ լէ կը թալէ»:

— Զէ:

«Հաչ հօ, ըսէ կը թալէ, տնաներ»:

— Կը թալէ, Գէլ աղբէր:

Գէլ գնաց ու եկաւ, գնաց ու եկաւ՝ ու զմրկ ի ձիու մը փոր, ձին աղէկ աւազէ (աքացի) մը չիջուց (իջեցրեց) գիլու ճակտին, աչքեր թռան եկան ի դուրս: Առուձ մօտեցաւ գիլուն ու ըսեց — Գէլ աղ բէր, նոր քու մագեր գոկցեր է, քու աչքեր արնխոններ է, քու պոչ կեռեր է եկի վրը՝ քու ճակտին, ու քու պոչ տակ լէ կը թալէ:

Ս ի կ ե ր է ց .

Կնիկ, կըսէ անգամ մը Սիկ երէց, ելի՛ զմեր տուն բառնանք վրը մեր իշուն, առնինք զմեր ճոթեր երթանք դրախտ: Զտուն կը բառնան, զճոթեր կէցկին չառաջն ու կընկնան ճամբայ: Հատ ու քիչ կերթան՝ Ադամ կիգայ — (պատահել):

«Նա Տէրտէր, խէր եղնի, իդա հըմլա ճոթով պոթով, քօչ ու բար-խանով դոր (դէպի ուր) կերթաս»:

— Կերթամ դրախտ:

«Ի՛մալ դրախտ, երեց, դու ծնու իս, խելքդ թռուցեր իս. հարի մարդ չմեռնի, չերթայ էն դիւ աշխարք, կընայ որ երթայ դրախտ»:

— Դու հն իս, հըմլա չգիտութենով կը գրուցիս, ըսէ գբու անուն տեսնամ:

«Նս Ադամն իմ, չըս ճանչնայ»:

— Ի՛մալ. տօ Ադօ, Ադօ, յօրին Աստուած գբրգի առօք փառօք ստեղծեց, դրեց անմահութենի դրախտ: աշխարքի անուշ յանուշ տուեց քզի որ ուտէր, խմէր, ուրախէր. դու չկշտացար, ելար. գԱստըծու պատուերանք կոտրեցիր, զճառի պտուղ կերար, զմրդի լէ չըն կըցուցիր (ընկենու) իդա հալ, չէ՞ իդա չըմէն գբու մեղքն է կը քաշինք. հը՛մ, դու է՛գ քու հալով կըցար գացիր դրախտ. ես չըմ կը՛րնայ: Տէր Սիկ կը քաշէ գգօպալ (կոպալ, կեռ գլուխ ձեռնափայտ) կընկնայ Ադամայ չետե, Ադամ կը փախնի, ինք կընցնայ երթայ հըտ ուր ճամբուն:

Չատ կերթայ, քիչ կերթայ, Մատոս Աղէն (Մաթոս աղա) կը հանպտի իրիցուն.

«Օրշնեա ի Տէր, Տէր Սիկ»:

— Աստուած օրշնէ:

«Երէց, դոր կերթաս»:

— Կերթամ դրախտ:

«Ի՛մալ դրախտ. ծռեր իս. Տէրտէր, մարդ հարի չմեռնի, չերթայ էնդիւ աշխարք, կընայ երթայ դրախտ»:

— Դու որն իս:

«Նս Մատոս Աղէն իմ»:

Տօ քրքրուկ Մատօ, յօրին Աստուած քրգի ին հարիր տօղսան (իննսուն) և՛ ին տարի և՛ տուեց, դու չկշտացար. Աստուծոյ էլ ումր ուղեցիր, Աստուած լէ գուր հրիշտակ ճամբից քու մօտ, քզի ըսեց. Մատոս Աղա, գբու ձեռք զարկ վրը եզան պառեկին, ինչսղար (ինչքան) որ մազ ընկաւ ձեռացդի տակ, էն խղար լէ քրգի ումր կիտամ,

անկշտում քրքրուկ Մատո, դու յօրին գփորդ թալեցիր վրը եզան.
տեսնար իմալ հրիշտակ լէ տփեց վրը քու զլսուն, գքու հոգին առաւ:
Դու քու աղանութենով կրցար գացիր դրախտ, ես չըմ կրնայ. կեր-
թաս դէն թէ չէ զնաներդ կը ճարդեմ: Սլիկ երեցնէ որ զգուպլ կը
վերցու, Մատոս Եղէն կը փախնի, ինք կընցնայ կերթալ:

Գացին գացին, Նու Նահապետն եկաւ ռաստ:

«Սըշնեա ի Տէր Տէր Սլիկ, դո՞ր կերթաս:

— Աստուած օրշնէ, կերթամ դրախտ:

«Տէրտէր, ծուռ մ'եղնի, մարդ հարի չմեռնի, կրնայ երթալ
դրախտ»:

— Դո՛ւ որն իս զիդա Խէ՛ (խօսք) ընձի կէնիս:

«Ես Նու Նահապետն իմ»:

— Տը՛շն, կրցար զԱստուած խաբեցիր, ջըհեղեղ հանել տուիր,
դաշխար չըմէն աւրեցիր, հա՛ճ (ետու, ապա) գացիր դրախտ. քու հո-
գին եյնայ՝ ես լէ պտի երթամ:

Կնաց գնաց՝ Աբրահամն եկաւ ռաստ:

«Խէ՛ր եղնի, Սլիկ երէց, ո՛ւր կերթաս»:

— Կերթամ դրախտ:

«Ծուռ մ'եղնի, երէց, հարի մարդ չմեռնի, կրնայ երթալ դրախտ»:

— Տօ՛ դէ մեռի՛. աղէկ մարդ մ'եղնէր՝ գքու տղէն չըմ մորթի,
զգալալ (աղնիւ) տղէն մորթեց՝ կրցաւ գնաց դրախտ, ես չըմ կրնայ:
Սլիկ երէց զգուպլն որ կը վերցու, Աբրահամ կը փախնի, ինք կընց-
նայ կերթալ:

Կերթալ կերթալ՝ Մովսէս մարգարէն կիգայ ռաստ:

«Տէ՛ր Սլիկ, չո՛ւր կերթաս»:

— Կերթամ դրախտ:

«Երէց, դու ծո՛ւր իս, հո՛ւ իս (թերեւս հա՛ճ=տն. ազատ), հըմ-
լա ճօով պօօով, հալահլով իմալ կերթցուի դրախտ. մարդ պէտք է
մեռնի, երթայ էն դիւս Խէ՛ (Խէ՛=տն. աշխարհք) հա՛ճ (ապա)
մտնայ դրախտ»:

— Դո՛ւ որն իս, հըմլա զըմէն ճամբէք ընձի նշանց կիտաս:

«Չէ՛՝ ես Մովսէս մարգարէն իմ»:

— Տօ՛ թլօլ (թլուատ) Մովսէս, դու շմտ արդար մարդմ ես,
խաբեցիր գքու ազգ, բերիր անապատներ քառտուն տարի Վէ՛ յա՛ճ
(բրդ. մանածել, շրջեցնել), զըմէն ջարդ ու փշուր էրիր, դու որ շատ
արդար էր, յօրին սարի գլուխ մեռար, զաւետեաց երկրի չերես լէ չը-
կրցար տեսար, գնա դէն, գնա, թէ չէ զգուպլ վերցուցի զոտներդ
կը ջարդիմ: Սլիկ երէց զգուպլն որ վերցուց, Մովսէս փախաւ, ինք
ընկաւ ուր ճամբէն:

Խե՛լ մը գնաց, Դաւիթ մարգարէն եկաւ ռաստ:

«Տէ՛ր Սլիկ, դո՞ր կերթաս»:

— Կերթամ դրախտ:

«Երէց, Աստուած գքու տուն չակուէ (չաւերէ), կնիկ ճօով իմալ
կերթաս դրախտ, ծո՛ւր իս դու»:

— Հալա (գեռ) գքու անուն լէ ըսէ, տեսնամ դո՛ւ որն իս:

«Դաւիթ մարգարէն իմ, քօ՛ւիս, չըս ճանչնայ»:

—Տօ եմ՝ քօռնաս ու կուրնաս, սո պոժիկ (շէկ, չուռ) Դիօ, քառսուն կնիկ էրիր, զուրիէն սպանիր, զկնիկ չուրնէ խլիր, դու կըցար գացիր դրսխտ, ես չըմ կընայ։ քէլէ, կնիկ, սըբ Կարապետու մառմառ գերեզման լէ գինայ՝ պիտի երթամ դրախտ՝ ու հըմլա քօչ ու բարխանով պտի երթամ։

Գացին գացին՝ մարդ մը էն դիէն «հօշա, հօշա էրեց՝ ու եկաւ գերեցու իշու յարջնն առաւ, բօռաց։

«Է՛, դու հրն իս, ինչ մարդ իս, հըմլա քօչ ու բարխանով հըր կերթաս անհրամանք։

—Ես Տէր Սլիկն իմ, Տէր Սլիկ, առեր իմ զիմ ճիժ ու պիժ, կերթամ դրախտ։

«Խարձի չետ, դարձի՝ թէ չէ զհոգիդ իդա սհաթին կաւանդիմ, չարուխ բժով, կնիկ ճժով, էշ ու բարխանով իմալ կերթաս դրախտ»։

—Դո՛ւ որն իս, հըմլա կտոր կտոր կեղնիս, հա՛ւ կը բանցուս։

«Հոգէառ Գաբրէլ հրեշտակն իմ, քօռ է քու երկու լուս»։

—Տօ քօռ Կօ, դու օրական հազար հազար մարդ հա՛ւ, հա՛ւ, (իբրա՛ւ) անիրաւ) կ'սպանես, դու կրնաս երթաս դրախտ. ես չըմ կըրնայ, Կը քաշէ զգօպալ կը լարէ Կաբրէլի չետև լորտմնի (ձգովի) մը կը թալէ, մէկ կը շխկու (հարուածի ձայն) ի ճաներն, Կաբրէլ զմէկ ոտք կը վերցու, թօփտեղէն կը փախնի, Սլիկ երէց կերթայ հըտ ուր ճամբուն։

Չատ կերթան, քիչ կերթան՝ հեռուանց սպիտակ հօշ ու հա՛ւ կերևալ, կնիկ կըսէ Սլիկ երէց, կայ ու չկայ՝ իդա դրախտն է, արի նստենք, մըզի փրշուրմը հաց ուտենք, ռօրաթինք (հանգստանալ), չետև ելանաք երթանք դրախտ։ Նստան կերան, խմեցին, ըռըթան, ու ելան դէմ էրին ի սպիտակ տներ, դըռ (դեռ) չեն հասած էն տըներուն՝ որ մարդ մը եկաւ կանաւ յառջև ուրանց՝ հարցուց, դու հն եք։

—Ես՝ Սլիկ երէցն եմ, իդա իմ երեցկին է, իդո՛նք՝ իմ ճժկներն են, ինա լէ իմ իշուկն է, զիմ պաշարն իմ բարձի վրէն, եկեր ենք որ մտնանք դրախտ։

«Երէց, կըսէ էդ մարդ, դու իսօմ ծուռ-յես, լը՛ դու հա՛ւ (իբր թէ) տէրտէր իս, վըր քու արևուն՝ կարդցար իս. զգիր ու գրի գօրու-թին գինաս, սև ու սպիտակի վրէն կաչքիս, հարի մարդ չմեռնի, չըթաղւի. յերթայ էն դիւռ աշխարք կընայ երթայ դրախտ»։

—Ախր եկեր ենք կանի դրախտի դուռ, թող մտնանք ներս, հա՛ւ (դունէ) զդրախտի երես տեսնանք։

«Է՛, անկապեղի է, չեղնի որ չեղնի էդ բան»։

—Դո՛ւ որն իս, զքու անուն լէ ըսէ քիմանամ։

«Ես Քրիստոսն եմ»։

«Հայ Աստուած զքու տուն լէ աւուրէ, որ դու շատ աղէկ մարդ՝ եղնի՛ր՝ զբզի լէ չընբըռնի, չընչարչի. Խարձի կնիկ, դարձի, երթանք, Աստուած քարուքանդ ու բրիշակ (աւերակ) էնէ հըմալ դրախտ, որ եդա խղար դավաճի (դատախաղ) չեղնի մարդու»։

Տէր Սլիկ կաննէ զուր կնիկ ու ճիժ՝ փօռ ու փռման կը դառնայ չետ։

